

# ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2018թ. հունիսի 4-ի նիստի

(արձ. N12)

1. 2018թ. ընդունելության գործընթացի առաջին փուլի արդյունքների վերաբերյալ ԸՀ-ի պատասխանատու քարտուղար Ն. Բերոյանի զեկույցն ընդունելի գիտություն,

1.1 դիմորդների անհրաժեշտ քանակ ապահովելու նպատակով նամակով դիմել ՀՀ ԿԳ նախարարին՝ թույլատրելու փաստաթղթերի ընդունելության երկրորդ փուլում ընդունել նաև առաջին փուլից ուշացած դիմորդների փաստաթղթերը:

2. Մինչև ս.թ. հունիսի 28-ը կազմակերպել Թատրոնի և կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետների ավարտական ներկայացումների և ավարտական ֆիլմերի հանրային ցուցադրություններ,

2.1 հանձնարարել ԹՖ դեկան Է. Հեքեքյանին երկօրյա ժամկետում ներկայացնել լավագույն ավարտական ներկայացումների ցանկը՝ ներառելու Ուսումնական թատրոն - լաբորատորիայի խաղացանկում,

2.2 թույլատրել Ուսումնական թատրոն - լաբորատորիայի տնօրինությանը կազմակերպել տոմսերի վաճառք և ստացված հասույթից դերակատարներին հատկացնել ելույթավճար:

Հանձնարարել ֆինանսատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր Վ. Եղիազարյանին ներկայացնել առաջարկ ելույթավճարների տոկոսաչափի վերաբերյալ,

2.3 պայմանավորվածություն ձեռք բերել ՀՀ ազգային օպերային թատրոնի տնօրինության հետ՝ պարարվեստի ռեժիսուրայի շրջանավարտների ավարտական աշխատանքների հանրային ցուցադրությունը կազմակերպելու Օպերային թատրոնի բեմում:

2.4 Հանձնարարել ԿՀԱ ֆակուլտետի դեկան Ա. Երզնկյանին հնգօրյա ժամկետում ներկայացնել հանրային ցուցադրության ներկայացվող ավարտական ֆիլմերի ցանկը և ցուցադրությունը կազմակերպել Հ. Մայրանի անվան կինոդերասանի թատրոնում,

2.5 ԵԹԿՊԻ-ի ավարտական աշխատանքների հանրային ցուցադրությունը գովազդել ֆեյսբուքյան էջերում և ինստիտուտի կայքում,

2.6 հանձնարարել Միջազգային բաժնի աշխատակազմին հնգօրյա ժամկետում ուսումնասիրել առաջիկայում կայանալիք միջազգային կինոփառատոների ծրագրերը և

ներկայացնել առաջարկներ ավարտական լավագույն ֆիլմերը համապատասխան կինոփառատոների ծրագրերում ընդգրկելու համար:

Սույն հանձնարարության կատարման վերահսկողությունը հանձնարարել պրոռեկտոր Հ. Ավագյանին:

3. ԵԹԿՊԻ-ում կինոարտադրություն կազմակերպելու Հայկ Ավագյանի ծրագիր-առաջարկը համարել ընդհանուր առմամբ ընդունելի:

Ծրագրի իրագործման մանրամասները մշակել և քննարկել ԿՀԱ ֆակուլտետի հետ համատեղ՝ աշխատանքային խմբով:

4. Փոխհատուցման վերաբերյալ ռեժիսորական IV կուրսի շրջանավարտ Էդգար Մեհրաբյանի դիմումը քննարկել և տալ լուծում Միջազգային բաժնի ներկայացրած բացատրագրից հետո: Ըստ այդմ կատարել վարչական եզրակացություններ:

**Գիտքարտուղար**

**Գ.Հովհաննիսյան**